

Մասնագիտության Չարգացման Ծնողական Ձեռնարկ¹

Մասնագիտության վերաբերյալ իրազեկվածության և դրա բացահայտման ծնողական ուղեցույց ...

Բովանդակություն

Ինչո՞ւ պետք է իմ երեխան մասնագիտություններ ուսումնասիրի:

Ինչո՞ւ է կարևոր շուտ սկսելը:

Մասնագիտության վաղ բացահայտում նշանակում է ընտրել

մասնագիտություն և հավատարի՞մ մնալ դրան:

Ինչո՞ւ է կարևոր իմ օգնությունը:

Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ երեխային՝ ընտրելու գոհացնող մասնագիտական ուղի:

Ինչպե՞ս պետք է սկսեմ մասնագիտության վերաբերյալ զրույց վարել

երեխայիս հետ:

Ինչպիսի՞ն պետք է լինի մասնագիտության բացահայտումը:

Որտե՞ղ կարող է իմ երեխան մասնագիտության ուսումնասիրության համար հուսալի տեղեկատվություն գտնել:

ԻՆՉՈՒ՞՞ ՊԵՏՔ Է ԻՄ ԵՐԵՒՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻ

Որպեսզի Ձեր երեխան մասնագիտության վերաբերյալ ճիշտ որոշում կայացնի, նա պետք է ուսումնասիրի և բացահայտի բազմաթիվ մասնագիտություններ: Մասնագիտության բացահայտման հետ կապված միջոցառումներին ակտիվ մասնակցությունը կօգնի Ձեր երեխային տեղեկանալ բազմաթիվ մասնագիտական մատչելի հնարավորություններին և քայլերին, որոնք պետք է ձեռնարկվեն մասնագիտական նպատակներին հասնելու համար: Մասնագիտության բացահայտման որոշ առավելություններ ներառում են՝

- Ձեր երեխայի ուշադրությունը այնպիսի մասնագիտությունների վրա հրավիրելը, որոնք նա երբևէ նկատի չի ունեցել, և
- Ավագ դպրոցից հետո կրթության և ուսուցման տարբեր տեսակների բացահայտումը, ինչպես նաև դրանց արժեքը, այնպես որ Ձեր երեխան ժամանակ և գումար չվատնի իր մասնագիտության հետ առընչություն չունեցող դասընթացների վրա:

¹ Վերցված է Ամերիկայի Մասնագիտությունների Ռեսուրսների Ցանցի (ACRN) և Սոնոմա վարչաշրջանի կրթական գրասենյակի կողմից մշակված հրատարակություններից(SCOE):

- Հետաքրքիր մասնագիտությունների աշխատանքային միջավայրը հասկանալը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ՇՈՒՏ ՄԿՍԵԼԸ

Մասնագիտության իրազեկվածությունը շուտ սկսելը կարևոր է, որովհետև այս իրազեկվածությունը կարող է՝

- Մեծացնել դպրոցում Ձեր երեխայի հետաքրքրությունը,
- Նվազեցնել Ձեր երեխայի դուրս մնալու հավանականությունը, և
- Ցույց տալ Ձեր երեխային, որ այն, ինչ նա այժմ անում է դպրոցում, իր հետագա նպատակներին հասնելու բանալին է:

Մինչդեռ տարրական դպրոցում Դուք կարող եք օգնել Ձեր երեխային՝

- բացահայտել տարբեր մասնագիտություններ,
- դպրոցում սովորածը կապել իրական կյանքի իրավիճակների հետ,
- պատկերացնել ինքնիրեն որևէ աշխատանքում, և
- զարգացնել հմտություններ, ինչպիսիք են այլ անձանց հետ աշխատելը և խաղալը, որոշումներ կայացնելը, խնդիրներ լուծելը, և առաջատար լինելը. սրանք են աշխատանքային պատրաստվածության կարևոր հմտությունները:

Հաճախ մասնագիտությունների վերաբերյալ երեխաների գիտելիքները սահմանափակվում են նրանով, ինչը նրանք տեսնում են հեռուստատեսությամբ կամ ինչ անում են նրանց ընտանիքներն ապրելու համար: Ձեր երեխային աշխատանքին նախապատրաստելու լավագույն տարբերակներից մեկը նրան մասնագիտությունների լայն շրջանակի մասին ուսուցանելն է:

Որպեսզի օգնեք Ձեր երեխային հասկանալ, թե իր դպրոցական աշխատանքը որքան անհրաժեշտ է ապագայի մասնագիտության համար, ցույց տվեք նրան թե աշխատողներն ինչպես են կիրառում այդ հմտությունները իրենց աշխատանքում: Օրինակ՝

- անասնաբույժը մաթեմատիկական հմտությունները կիրառում է կատվի համար անհրաժեշտ դեղորայքի չափը հաշվելու համար,

- գրավոր հմտություններն անհրաժեշտ են ուստիկանին ակտեր կազմելու համար, և
- ատաղձագործը պետք է մի շարք մաթեմատիկական հմտություններ ունենա, որպեսզի կարողանա ավարտել շինարարական նախագիծը:

Ձեզնից է կախված ցույց տալ Ձեր երեխային դպրոցի և մասնագիտության միջև ուղիղ կապը և պարզաբանել, որ դպրոցական հաջողությունները մասնագիտական հաջողությունների համար դռներ են բացում:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՂ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԸՆՏՐԵԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼ ԴՐԱՆ:

Ո՛չ: Մասնագիտության վաղ բացահայտումն այն է, երբ Ձեր երեխային ստիպում եք տեսնել իր առջև բաց եղող անհամար մասնագիտական ուղիները: Մասնագիտության զարգացումը հարատև գործընթաց է, և Դուք պետք է ակնկալեք, որ Ձեր երեխայի պլանները կարող են փոխվել, քանի որ նա հասունանում է և առավել շատ տեղեկություն է հավաքում:

Մասնագիտություններ բացահայտել չի նշանակում վերջնականապես որոշում կայացնել: Այն իսկապես նշանակում է, որ Ձեր երեխան մասնագիտության վերաբերյալ ավելի ճիշտ որոշում կկայացնի, որովհետև նա ավելի ինքնավստահ առաջ կշարժվի՝ կիրառելով տարրական դպրոցում դրված հիմքը:

Ահա մի բան, որի մասին պետք է մտածել: Առաջին պատճառը, որ աշակերտները դուրս են մնում քոլեջից, մասնագիտության վրա կենտրոնանալու պակասն է: Եվ որքան անվճռական է քոլեջի աշակերտը, այնքան ավելի հավանական է, որ նա հավելյալ գումար և տարիներ ծախսի քոլեջում աստիճան ձեռք բերելու համար: Մասնագիտության վաղ բացահայտումը քոլեջի/մասնագիտության վրա կենտրոնանալու բանալին է:

ԻՆՉՈ՞Ւ Է ԻՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ

Ձեր օգնությունն ամենակարևորն է, որովհետև՝

- Հետազոտությունները ցույց են տալիս, որ ծնողները և խնամակալները իրենց երեխաների մասնագիտության ընտրության հարցում մեծ ազդեցություն ունեն:

- Որպես ծնող Դուք Ձեր երեխային ճանաչում եք ավելի լավ, քան որևէ մեկը:
- Դուք, ավելի քան որևէ մեկը, հետաքրքրված եք օգնել Ձեր երեխային ընտրել բարձր վարձատրվող մասնագիտություն:
- Դուք գիտեք, որ Ձեր երեխայի ապագան չափազանց կարևոր է որպեսզի թողնվի բախտի կամ պատահականության քմահաճույքին:

Հոյակապ մասնագիտությունները հենց այնպես տեղի չեն ունենում, դրանք զգուշորեն պլանավորման արդյունք են, և Դուք միակ անձնավորությունն եք, ով կարող է երաշխավորել, որ Ձեր երեխան իր հնարավոր լավագույն ընտրությունն է կատարում:

Կարևոր է իմանալ, որ մարդիկ մասնագիտություն են ընտրում մի շարք պատճառներով՝

- Ոմանք կենտրոնանում են այն մտքի վրա, թե մեծանալով ինչ են իրենք դարձել և ընտրում են մասնագիտություն՝ նման իրենց ծնողներին կամ խնամակալներին,
- ոմանք ընտրում են մասնագիտություն՝ հիմնվելով աշխատավարձի վրա, և
- ոմանք «ընկնում են» որևիցե մասնագիտության մեջ, որովհետև սկսել են աշխատել և որոշել են մնալ այդ ոլորտում:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՕԳՆԵԼ ԻՄ ԵՐԵՒԱՅԻՆ՝ ԸՆՏՐԵԼՈՒ ԳՈՀԱՑՆՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԻ

Մասնագիտական ուղի ընտրելու առաջին քայլը Ձեր երեխայի հետաքրքրությունները բացահայտելն է:

Ինչո՞ւ է սա կարևոր: Քանի որ հետազոտությունը ցույց է տալիս, որ Ձեր երեխան ավելի հաջողակ և ավելի բավարարված կլինի իր մասնագիտության ընտրության հարցում, եթե այդ ընտրությունը հիմնված է նրա հետաքրքրությունների վրա:

Նրանց շահերը մատնանշում են այն ճանապարհը, որը տանում է դեպի հնարավոր լավագույն մասնագիտական ուղի: Ահա մի քանի հարցեր, որոնք

Դուք կարող եք տալ Ձեր երեխային նրա հետաքրքրությունների պատկերն ստանալու համար՝

- Ո՞րն է քո սիրած դպրոցական առարկան:
- Արտադպրոցական ո՞ր միջոցառումներն են քեզ առավել դուր գալիս:
- Որո՞նք են քո նախասիրությունները:
- Ընկերներիդ հետ ի՞նչ է քեզ դուր գալիս անել:
- Քո կարծիքով ի՞նչ հատուկ հմտությունների ես դու տիրապետում:
- Քո ո՞ր արարքով ես դու առավել հպարտանում:
- Ի՞նչ է քեզ ամենից առավել հետաքրքրում:

Բացի Ձեր երեխային ուղղակի հարցնելուց, կան նրա հետաքրքրությունները ճանաչելու այլ ձևեր: Կենտրոնացեք միջոցառումների, գրքերի, ֆիլմերի և հեռուստատեսային շոուների վրա, որոնք դուր են գալիս Ձեր երեխային, հետևեք կայքէջերին, որոնք նա այցելում է և նրան, թե ինչպես է օգտագործում իր ազատ ժամանակը: Երբ որ Ձեր երեխային օգնեք հետաքրքրություններ բացահայտել, դրանից հետո այդ հետաքրքրությունները աճեցնելու ուղիներ փնտրեք: Ահա մի քանի գաղափարներ՝

Եթե Ձեր երեխային հետաքրքրում են կենդանիները , հնարավոր է որ նա ցանկանա

- Դառնալ 4-H ակումբի անդամ
- Կամավորագրվել տեղի անասնաբուժական կլինիկայում
- Զբոսանքի տանել կամ խնամել հարևանի շանը

Եթե Ձեր երեխային հետաքրքրում է արվեստը, հնարավոր է որ նա ցանկանա

- Ձևավորել անձնական կայքէջը
- Բարեկամների և ընկերների համար ծննդյան և տոնական բացիկներ պատրաստել
- Դպրոցի տեղեկագրի համար գրաֆիկաներ պատրաստել

Եթե Ձեր երեխային դուր է գալիս օգնել մարդկանց, հնարավոր է որ նա ցանկանա

- Ամառային ճամբարի խորհրդատու լինել
- Ընկերոջ կամ բարեկամի երեխայի դայակը լինել
- Ավելի փոքր երեխայի կարդալ սովորեցնել

Եթե Ձեր երեխային դուր է գալիս պատրաստել կամ վերանորոգել իրեր, հնարավոր է, որ նա ցանկանա՝

- Դետալների հավաքածուից ռադիո կամ համակարգիչ պատրաստել
- Առանձնացնել հին սարքավորումը և կրկին հավաքել
- Թռչնի բույն նախագծել և կառուցել

Եթե Ձեր երեխան սիրում է սպորտը, հնարավոր է, որ նա ցանկանա՝

- Խաղալ մարզական թիմում
- Օգնել մարզիչին
- Դատավոր կամ մրցավար լինել համայնքային խաղերում

Սրանք ընդամենը գործունեության մի քանի ոլորտներ են, որոնք կօգնեն Ձեր երեխային բացահայտել իր հետաքրքրությունները և ավելի լավ կպատրաստեն նրան իր ապագա մասնագիտության վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Ձեր երեխան նաև հնարավորություն ունի ստեղծել և պահպանել տեղեկատվությունը ընթացիկ հարմարեցումների համար՝ օգտագործելով Ավագ Դպրոցի Ծրագիրը և Մասնագիտության Գործողությունների Ծրագիրը, որոնց նրանք կարող են անվճար օգտագործել Կալիֆորնիայի Մասնագիտությունների Կենտրոնի «Իմ աշխատակազմը» հաշվում: Ժամանակ գտեք օգնել Ձեր երեխային հաշիվ ստեղծել և անհրաժեշտության դեպքում թարմացնել իր ծրագրերը:

ԻՆՉՊԵՄ ՊԵՏՔ Է ՍԿՍԵՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՋՐՈՒՅՑ ՎԱՐԵԼ ԵՐԵՆԱՅԻՍ ՀԵՏ

Ձեր երեխայի հետ մասնագիտության վերաբերյալ զրույց սկսելու ուղիներից մեկն է ցույց տալ նրան, թե իր հետաքրքրություններն ինչ առընչություն ունեն մեծահասակների գործունեության հետ: Օրինակ՝

- *Եթե Ձեր երեխան սիրում է արվեստը*, զրուցեք նրա հետ, թե ինչպես են մեծահասակներն օգտագործում արվեստը տների, հագուստի, ամսագրերի հայտարարությունների, ֆիլմերի դեկորացիաների և նույնիսկ խաղալիքների ձևավորման համար: Բացատրեք, որ արվեստը նաև օգտագործում են մուլտֆիլմեր նկարելու, ծաղիկներ ձևավորելու և ամսագրերի և գրքերի համար լուսանկարներ

պատրաստելու

համար:

- *Եթե Ձեր երեխան սիրում է լինել բացօթյա միջավայրում*, գրուցեք նրա հետ, թե ինչպես նա կարող է մասնագիտություն ունենալ, որը ներառում է դրսում աշխատանքը, ինչպիսիք են լանդշաֆտային ճարտարապետությունը, անտառաբուծությունը, հնաբանությունը, շինարարությունը, ծովային կենսաբանությունը կամ առևտրային ձկնորսությունը:
- *Եթե Ձեր երեխան շատ շփվող է*, գրուցեք նրա հետ, թե ինչպես մարդիկ, ովքեր սիրում են գրուցել և աշխատել մարդկանց հետ, կարող են ընտրել ուսուցչի, փաստաբանի, հաճախորդների սպասարկման բաժնի ներկայացուցչի, ընդունարանի աշխատակցի, հյուրանոցի մենեջերի կամ միջոցառումներ կազմակերպողի աշխատանքը:
- *Եթե Ձեր երեխային դուր է գալիս օգնել մարդկանց*, գրուցեք նրա հետ այն զանազան միջոցների մասին, որոնք նա կարող է կիրառել իր մասնագիտությունում, ինչպիսիք են բուժքրոջ, բժշկի, մարզիչի, փրկարարի, ընտանեկան խորհրդատուի կամ երեխաների խնամողի աշխատանքը:
- *Եթե Ձեր երեխան սիրում է մաթեմատիկան*, գրուցեք նրա հետ հաշվապահ, համակարգչային ծրագրավորող, ինժեներ կամ վիճակագիր լինելու հնարավորության մասին: Դուք նաև պետք է հիշեցնեք Ձեր երեխային, որ համարյա թե բոլոր մասնագիտություններում կիրառվում է բազային մաթեմատիկան, այնպես որ դա շատ կարևոր հմտություն է, որին պետք է տիրապետել:
- *Եթե Ձեր երեխային դուր է գալիս պահպանել այլ անձանց*, գրուցեք նրա հետ այնպիսի մասնագիտությունների մասին, ինչպիսիք են ոստիկանության աշխատակցի, դատական փորձագետի, խուզարկուի, քննիչի, պատժից պայմանական-վաղաժամկետ ազատվածներին հետևող սպայի, անվտանգության աշխատակցի, հրշեջ խմբի աշխատողի մասնագիտությունը:

ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Մասնագիտության բացահայտումն սկսվում է մի շարք առկա և նոր ի հայտ եկող աշխատանքների մասին տեղեկացվածությամբ: Այն շարունակվում է մի շարք մասնագիտություններ «փորձելու» հետազոտությամբ: Կա մասնագիտություններ բացահայտելու երկու միջոց՝ մեկը ուսումնասիրությունն է, մյուսը՝ փորձը: Օգնեք Ձեր երեխային երկուսում էլ ընդգրկվել:

Մասնագիտություններ ուսումնասիրելը. Ձեր երեխան պետք է որքան հնարավոր է շատ տեղեկատվություն հավաքի տարբեր մասնագիտությունների տարբերակների վերաբերյալ: Այս կերպ նա կկարողանա ստեղծել կրթական և մասնագիտական առավել իրատեսական ծրագիր, որը նրան կուղղորդի որոշում կայացնելիս: Մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը, որը պետք է ուսումնասիրվի ներառում է՝

- Ի՞նչ կրթություն է պահանջում այս մասնագիտությունը:
- Որտե՞ղ կարելի է ստանալ այդ կրթությունը/ուսուցումը:
- Ես կարո՞ղ եմ ձեռք բերել պահանջվող կրթությունը/ուսուցումը այս մասնագիտության ոլորտ մուտք գործելու համար:
- Ո՞րն է այս մասնագիտության ապագայի հեռանկարը:
- Ո՞րն է մասնագիտության առաջընթաց տանող ուղին:
- Ի՞նչ այլ մասնագիտություններ են սերտորեն կապված այս մասնագիտության հետ:
- Որո՞նք են տվյալ մասնագիտությունում ներկայացված առօրյա առաջադրանքները:
- Արդյո՞ք առաջադրանքները համապատասխանում են իմ հետաքրքրություններին և աշխատանքային արժեքներին:
- Որո՞նք են սովորական աշխատանքային ժամերը:
- Արդյո՞ք այս մասնագիտությունը ճամփորդել պահանջում է:
- Ընդհանուր առմամբ ինչպիսի՞ առողջապահական և կենսաթոշակային նպաստներ է ներառում նմանօրինակ աշխատանքների շարքը:
- Որքա՞ն է այս մասնագիտությանը բնորոշ աշխատավարձը:
- Արդյո՞ք ես պետք է տեղափոխվեմ՝ աշխատանք գտնելու համար:

Մասնագիտություններ փորձելը. Մինչ Ձեր երեխան գտնվում է միջին կամ ավագ դպրոցում նա կարող է մասնակցել մասնագիտությունների բացահայտման բազմաթիվ միջոցառումների: Այս միջոցառումները կարող են ներառել՝

- **Informational interviewing.** [**Տեղեկատվական հարցազրույց**] (Կայքէջն անգլերեն լեզվով է): Խրախուսեք Ձեր երեխային դիմել իր ընտրած մասնագիտության ոլորտում աշխատող մարդկանց: Ձեր երեխան պետք է յուրաքանչյուր անձի տեղյակ պահի նրան դիմելու նպատակի մասին և որոշի, թե որքան ժամանակ անձը պետք է խոսի: Նրանց տրվող կարևոր հարցերը ներառում են՝
 - Ձեր աշխատանքում ինչպիսի՞ առօրյա գործողություններ եք ^օ Դուք կատարում:
 - Ինչպե՞ս եք ^օ Դուք այն ընտրել որպես մասնագիտություն:
 - Ինչպիսի՞ ուսուցում է անհրաժեշտ եղել, որպեսզի մուտք գործեք այս մասնագիտության ոլորտ:
 - Ամենից շատ ի՞նչն է Ձեզ դուր գալիս Ձեր աշխատանքում:
 - Ամենից շատ ի՞նչը Ձեզ դուր չի գալիս Ձեր աշխատանքում:
- **Աշխատանքի տոնավաճառներ.** Ամեն հնարավորություն օգտագործեք Ձեր երեխայի հետ աշխատանքի տոնավաճառներ հաճախելու համար, այսպիսով երկուսդ էլ հնարավորություն կունենաք ավելի շատ տեղեկանալ տարբեր մասնագիտությունների մասին: Աշխատանքի տոնավաճառները հաճախ ներկայացվում են ավագ դպրոցներում, տեղական քոլեջներում կամ տեղի առևտրի պալատների կողմից:
- **Job shadowing experiences.** [**Մասնագետների աշխատանքին հետևելու փորձառություն**] (Կայքէջն անգլերեն լեզվով է): Ձեր երեխան որքան շատ մարդկանց տեսնի աշխատանքային միջավայրում, այնքան ավելի տեղեկացված կլինի հնարավոր մասնագիտությունների վերաբերյալ: Ձեր երեխայի համար մասնագետների աշխատանքին հետևելու հնարավորության օրինակ է «Ձեր երեխային տարեք աշխատանքի» միջոցառմանը մասնակցելը:
- **Internships and work-based learning.** [**Պրակտիկա և աշխատանքի վրա հիմնված ուսուցում**] (Կայքէջն անգլերեն լեզվով է): Օգնեք Ձեր

երեխային գտնել իրեն հետաքրքրող մասնագիտության ոլորտին առնչվող պրակտիկա կամ աշխատանքի վրա հիմնված ուսուցում: Ձեր երեխայի ավագ դպրոցից ճշտեք, թե արդյոք նա կարող է նմանօրինակ աշխատանքային փորձի համար ավագ դպրոցից վարկ ստանալ: Պրակտիկաները և աշխատանքի վրա հիմնված ուսուցումը կարող են վճարովի կամ անվճար պաշտոնների համար լինել:

- **Կամավորական աշխատանք.** Խրախուսեք Ձեր երեխային կամավորագրվել ձեռնարկությունում կամ կազմակերպությունում, որն աշխատանք է ապահովում իրեն հետաքրքրող մասնագիտության ոլորտում:
- **[Career Technical Education \(CTE\) classes.](#)** [Մասնագիտության Տեխնիկական Կրթության (ՄՏԿ) դասընթացներ] (Կայքէջն անգլերեն լեզվով է): Խրախուսեք Ձեր երեխային ՄՏԿ դասընթաց անցնել այնպիսի ոլորտում, որը նրան հետաքրքրում է՝ իրական փորձ ձեռք բերելու մասնագիտության ոլորտում կիրառվող մեթոդներով և հմտություններով:
- **Էքսկուրսիաներ սովորողների համար.** Սովորողների համար էքսկուրսիաները այլ միջոց են Ձեր երեխայի համար՝ տեսնելու տարբեր մասնագիտական ոլորտներում աշխատողներին: Նախքան Ձեր երեխան կգնա սովորողների համար էքսկուրսիայի, խնդրեք նրան այդ ընթացքում հետևել տարբեր աշխատողներին և աշխատանքներին: Վերջում քննարկեք այդ մասնագիտությունները Ձեր երեխայի հետ: Դուք նաև կարող եք էքսկուրսիա կազմակերպել դեպի որևէ ձեռնարկություն կամ կազմակերպություն, որտեղ աշխատում են Ձեր երեխային հետաքրքրող մասնագիտության տեր մարդիկ:

ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ Է ԻՄ ԵՐԵԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՒՍԱԼԻ ՏԵՂԵԿՍՎՈՒԹՅՈՒՆ ՊՏՆԵԼ

Մասնագիտության բացահայտման համար կան շատ ռեսուրսներ: Եթե Ձեր երեխայի դպրոցն ունի մասնագիտական կենտրոն, դա հիանալի վայր է սկսելու համար: Տեղի գրադարանը կարող է մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համակարգչային համակարգ

(ՄՏՏՀ) ունենալ, որը մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության հարուստ աղբյուր է:

Մեկ այլ հիանալի աղբյուր է համացանցը: Ահա մասնագիտության վերաբերյալ տեղեկացվածության և բացահայտման հուսալի կայքէջերի ցանկը (կայքերից մի քանիսը միայն անգլերեն լեզվով են):

- [California Career Resource Network \(CaICRN\)](#)
[Կալիֆորնիայի Մասնագիտությունների Ռեսուրսների Ցանց]
- [California Career Zone](#)
[Կալիֆորնիայի Մասնագիտությունների Գոտի]
- [California Career Center](#)
[Կալիֆորնիայի Մասնագիտությունների Կենտրոն]
- [California Career Café](#)
[Կալիֆորնիայի Մասնագիտությունների Սրճարան]
- [California Colleges](#)
[Կալիֆորնիայի Քոլեջներ]
- [America's Career InfoNet](#)
[Ամերիկայի Մասնագիտությունների Տեղեկատվական Ցանց]
- [Occupational Outlook Handbook](#)
[Մասնագիտական Հեռանկարների Ձեռնարկ]
- [O*Net](#)
[Մշխատանքային Տեղեկատվական Ցանց (Occupational Information Network)]

Հիշե՛ք ...

Ի վերջո, մասնագիտության ընտրությունը անձնական որոշում է, այնպես որ մի փորձեք շեղել Ձեր երեխային դեպի որոշակի մասնագիտություն, որովհետև Շուք եք կարծում, որ դա հենց այն է, ինչը նրան կարող է դուր գալ կամ նա պետք է անի: Որպես ներգրավված ծնող, Ձեր երեխայի համար լայն հնարավորություններ ապահովեք, որպեսզի նա բացահայտի իր հետաքրքրությունները և ծանոթանա մասնագիտությունների հնարավորություններին: Վաղ տարիքից մասնագիտության վերաբերյալ խորհելու շուրջ Ձեր ներգրավվածությունը և խրախուսանքը կօգնի Ձեր երեխային ապագայի հաջողության հարցում:

Ձեր ուղղորդման և Ձեր ստեղծած հնարավորությունների շնորհիվ Ձեր երեխան կարող է փոխել մասնագիտական իր հետաքրքրությունները: Շարունակեք խրախուսել Ձեր երեխային, քանի որ մասնագիտության ընտրությունները փոխվում են. որքան շատ է նա տեղեկացված մասնագիտությունների մասին, այնքան ավելի լավ որոշում նա կկայացնի:

NOTE TO LOCAL EDUCATIONAL AGENCIES (LEAS): The California Department of Education (CDE) wishes to thank the California Career Resource Network and the Sonoma County Office of Education for their permission to translate this handbook. As a form of assistance to LEAs, the CDE offers this translation free of charge. Because there can be variations in translation, LEAs should confer with local translators to determine any need for additions or modifications, including the addition of local contact information or local data, or modifications in language to suit the needs of specific language groups in the local community. If you have comments or questions regarding the translation, please e-mail the Clearinghouse for Multilingual Documents (CMD) at cmd@cde.ca.gov.